

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԼՂՀ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ
ՀՈՒՇԱԹԱՆԳԱՐԱՆԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ
(1991-1994)**

«Գիգակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ -2019

Գրիգորյան Վերա

ԼՂՀ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի
ուղեցույց, Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2019, 96 էջ:

Սույն գիրք-ալբոմը ներկայացնում է ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի՝ մշտապես ցուցադրվող ցուցանմուշները, որոնցից, կարելի է ասել, հյուսվում են Արցախյան ազատամարտի պատմության շատ էջեր, պատերազմի «գլխավոր գործող անձը» հանդիսացող յուրաքանչյուր զինվորի եւ նրա ընտանիքի յուրատիպորեն դասավորված ճակատագիրը:

Նրանք, ովքեր հուշաթանգարանում լինելու առիթ դեռ չեն ունեցել, սույն ուղեցույցի միջոցով հնարավորություն ունեն գեթ հեռակա պատկերացում կազմելու հիշատակի այդ յուրօրինակ օջախի մասին...

Գիրք-ալբոմի էջերում կարմիր քելի պես անցնում է այն միտքը, որ խաղաղությունը չպետք է այլընտրանք ունենա:

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սկսած այն օրից, երբ իրականություն է դարձել Անհայտ կորած ազատամարտիկների թանգարան ստեղծելու գաղափարը, մեր հանրապետության մշակութային օջախներին ավելացել է ևս մեկը, որը, սակայն, առանձնանում է իր յուրահատկություններով:

Հուշաթանգարանը դարձել է սրբատուն անհայտության մեջ գտնվող հարյուրավոր մարդկանց հարազատների համար, որոնք իրենց փոքրիկ մխիթարությունն են գտնում ցուցափեղկերում դրված «մասունքների», ապրած կյանքի հիշատակների, լուսանկարների մեջ: Ուստի հաճախակի կարելի է լսել իրենց որդիների տունդարձին սպասող մայրերից, որ հուշաթանգարանը օտարության մեջ տառապող զավակների երկրորդ տունն է, որտեղ երկա՛ր սպասումը ծով համբերության, անմար հավատի ու անսպառ հույսի լիցքեր է ստանում, ամրապնդում աչքը ճամփին ու հեռուներին հառած յուրաքանչյուր մարդու հաստատակամությունը:

Հուշաթանգարանը նաև մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության դարբնոց է, որտեղ հայրենիքին անմնացորդ ծառայելու երդում են տալիս դպրոցականները մանկապատանեկան կազմակերպությունների շարքերն ընդունվելիս, ազատագրական պայքարի հերոսական դրվագներին, իսկ հայրենակիցների սխրագործություններին իրազեկ են դառնում Պաշտպանության բանակի հարյուրավոր զինծառայողներ, պատերազմի վետերաններ, ռազմաուսումնական հաստատությունների ուսանողներ և կուրսանտներ:

Հուշաթանգարանը նաև ճանաչողական մեծ գործառույթ է իրականացնում, որովհետև հենց այստեղ են մեր հանրապետության օտարերկրյա այցելուները, զբոսաշրջիկները և հյուրերը հասկանում Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության էությունը, մեր

հակառակորդի աներևակայելի դաժանությունն ու այլատյացությունը, որոնց բազում դրսևորումներից է ռազմագերիներին ու պատանդներին կտտանքների ենթարկելը և նրանց ազատելու մարդասիրական հարցն անգամ քաղաքականացնելը կամ շահարկելը և, վերջապես, հայ ռազմագերիների ու պատանդների աղբրեջանական բանտերում և աշխատանքային գաղութներում պահելու փաստի ուրացումն ու ժխտումը:

Թանգարանի գործունեության հիմքում այն ճշմարտությունն է, որ անհնարին է ապագա կերտել առանց անցյալը հիշելու և մեր պատմությունը սրբազրած հայրողիների անմահ գործը վերաիմաստավորելու: Ակներև են թանգարանի ձեռքբերումները մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը նպաստելու գործում:

Ուղեցույցն ընդգրկում է Արցախի Հանրապետության Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի պատմության, կառուցվածքի և հիմնականում արժեքավոր ցուցանմուշների կամ թանգարանում ներկայացված ազատամարտիկների վերաբերյալ համառոտ ակնարկ:

Բազմաթիվ լուսանկարների միջոցով առանձին-առանձին ներկայացված են հուշաթանգարանի գործունեությունը լուսաբանող մեծ և փոքր ցուցասրահների, ռազմահայրենասիրական առանձնասենյակի և Կարոտ Սկրտչյանի անվան գրադարանի հավաքածուների լավագույն նմուշները, ընդհանրապես՝ թանգարանի հիմնական ցուցադրությունները:

ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



1988թ. նոր թափ առած Արցախյան ազգային-ազատագրական շարժանը (շարժում, որի պահանջները լիովին տեղավորվում էին ԽՍՀՄ գլխավոր օրենքի շրջանակներում) Ադրբեջանը պատասխանեց զինված բռնաճնշմամբ, ապա և ժամանակակից պատերազմով: Այդ պատերազմում Արցախի Պաշտպանության բանակն ու ժողովուրդը հաղթեցին՝ հակառակորդին ստիպելով հրադադար կնքել:

Հաղթանակը նվաճվեց մեզ համար թանկ արյան գնով: Ռազմաճակատներում հերոսաբար զոհվեցին շատ հայորդիներ: Ոմանց անուններն էլ հայտնվեցին անհայտ կորածների ցուցակում, և կյանքն առաջին անգամ արցախցիների բառապաշար մտցրեց մի նորագույն հասպվում՝ ԱԿԱՀՄ, որը նշանակում է Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն:


Յուրաքանչյուր պատերազմում էլ լինում են ռազմագերիներ: Բացառություն չի կազմել եւ ադրբեջանա-դարաբաղյանը: Այդ պատերազմում արցախյան կողմից 773 անհայտ կո-

րածներից 250-ը ազատամարտիկներ են: Ինչպես հայտնի է, կան միջազգային որոշակի օրենքներ ու համաձայնագրեր, ըստ որոնց պատերազմած կողմերը, դրսևորելով բարի կամք, ազատ են արձակում ռազմագերիներին: Մինչդեռ Ադրբեջանը, որդեգրելով մերժողական քաղաքականություն, իրեն դե-ֆակտո դուրս է համարում այդ օրենքներից:

Անհայտ կորածների հարազատների տանջալից սպասումն ու որոնումը, առաջին շրջանի մի քանի առանձին դեպքերից բացի, արդյունք չէին տալիս, եւ հրադադարի հաստատումից չորս տարի անց, 1998 թվականին, նրանք որոշեցին ստեղծել իրենց հասարակական կազմակերպությունը՝ ջանքերը միավորելու և համակարգելու, ինչպես նաև՝ միության անդամներին նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալու նպատակով:

Հիմնադիր համագումարն ազդարարեց ԱԿԱՀՄ ծնունդը, և կազմակերպության նախագահ ընտրվեց անհայտ կորած ազատամարտիկ Սպարտակ Գրիգորյանի մայր Վերա Գրիգորյանը, որն առ այսօր հմտորեն վարում է կազմակերպության «նավը»:

ՀՐԱՎԻՐԱՏՈՄՄ



ԵՂՏ
ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱՑ ԱՅՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԿ
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ
1998թ.

ՀԱՎԱՏԱՑԵՔ
ԵՎ ԿԼԻՆԻՔ՝

Անկախությունն անտուկ երկրիս
Աշխարհը դեռ կճանաչի՝
Թող ոչ ոք մեզ չմատուցի...
«Մտայության արջի»:

Հավատագրեք, պիտի լինի.
Հավատարիմ թե՛ մնազինք
Հայրենիքին և սուրբ խաչին՝
Հայրց... քա՛րն էլ կկանաչի:

Մեծարգո պրն (տկն) _____
Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու

ԵՂՏ ԱԿԱՀՄ ՀԿ
Հիմնադիր համագումարին,
որը տեղի կունենա ս.թ.
օգոստոսի 5-ին, ժամը 10-ին
Մտերմանակերտի
կայագրի Սպայի սանդ

ԵՂՏ ԱԿԱՀՄ ՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Վազգին Մարգարյան 25:
Հեռ. 94-14-97, 250027



Վերա Գրիգորյանը ելույթ է ունենում ԱԿԱՀՄ հիմնադիր համագումարում



Նախագիծ

**ԼԵՆԻՆՅԻՆ ԳԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏՈՒ ԵՎ ՀԻՇԱՍԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԳՀ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԵՐԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տո՛ւ եւ հիշատակի օրերի մասին» օրենքի 18-րդ կետից հետո լրացնել «19. Հունիսի 29 - Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օր» բառակապակցությունները, պահպանելով մնացած կետերի համարակալման հաջորդականությունը:

Հոդված 2. Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Նախագիծը ներկայացրել է ԼԳՀ ԱԺ պետական-իրավական հանձնաժողովը

1999 թվականին ԱԿԱՀՄ առաջարկությամբ ու երկրի իշխանությունների համաձայնությամբ հռչակվեց Անհայտ կորած ազատամարտիկի օր, ինչը մեկ անգամ ևս փաստեց, որ պատերազմը չի վերջացել, քանի դեռ տուն չի դարձել վերջին զինվորը... Հունիսի 29-ի ընտրությունն ունի իր բացատրությունը. պատերազմի ժամանակ ա՛յդ ամսվա ա՛յդ օրը հայկա-

կան կողմն ունեցավ մեծ կորուստ, երբ «Արարո» կամավորական ջոկատի քաջակորով տղաները հայտնվեցին ծուղակում՝ ենթարկվելով դաժան խոշտանգումների, ապա եւ անհայտ ճակատագրի...



Հարգանքի փոփոխություն...



29 հունիսի 1999թ., Մրտիանակերտի հուշահամալիր



*Անհայր կորած ազատամարտիկների երեխաները
խաղաղություն են ուզում*



Հուշարձանին դեռևս փոքրիկ այս հուշաքարն էր փոխարինում



Տարիներ անց «Արար» ջոկարի հրամանատարն ու զինվորները հուշաթանգարանում



ԱԿԱՀՄ-ի գործունեությունը լուսաբանող ցուցաբախարակը



ԱՀ բժիշկները մեզ մոտ՝ մայրերի կողքին



Գարգսկանները հուշաթանգարանում սրանում են հայրենասիրության դասեր

ԱԿԱՀՄ-ը տարբեր ուղղություններով մշակել է իրականացրել է բազում ծրագրեր: Անհայտ կորած ազատամարտիկների որոնման աշխատանքներում կազմակերպությունը սերտորեն համագործակցում է Ռ-ազմագերիների ու պատանդների հանրապետական հանձնաժողովի եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ Ստեփանակերտի գրասենյակի հետ:



ԿԽՄԿ-ի Ստեփանակերտի գրասենյակի ղեկավարի հուսադրող ելույթը



*Հյուրընկալվել են ԿԽՄԿ-ի Սյրեփանակերտի գրասենյակի
ղեկավարն ու բժիշկը*



ԿԽՄԿ-ի ներկայացուցիչները հուշաթանգարանում

ԱԿԱՀՄ ստեղծման արդեն չորրորդ տարում վարչության նիստերից մեկում որոշվեց կառուցել հարազատների Սպասումն ու տղաների Հիշատակը խորհրդանշող հուշարձան եւ հուշաթանգարան: Չույգ նախագծերն էլ ի կատար ածվեցին 2004 թվականին: Հանդիսավոր բացումը տեղի ունեցավ, բնականաբար, նույն թվականի հունիսի 29-ին...



ԼՂՀ Նախագահ Ա.Ղուկասյանը հուշարձանի բացման արարողության ժամանակ (2004թ., հունիսի 29)



Թերեւս արժէ փաստել, որ դրանք նյութական պատկառելի ռեսուրս պահանջող ծրագրեր էին, որոնք կյանքի պիտի կոչվեին հիմնականում բարեգործական ներդրումների շնորհիվ, եւ ԱԿԱՀՄ ղեկավարությունը, կարելի է ասել, այդ գործի կայացմանը նվիրեց լարված ջանքերի մի քանի տարի:

Կազմակերպության ընդհանուր աշխատանքների մասին տարբեր տարիների, տարբեր առիթներով շատ է խոսվել, Վ.Գրիգորյանի հեղինակությամբ գրվել եւ լույս են տեսել մի շարք գրքեր, պարբերաբար տպագրվում է թանգարան այցելողների մակագրություններով «Կարմիր գիրք»՝ հուշամատյան, որի չորս հատորներն արդէն հրատարակվել են:

2015թ. հոկտեմբերի 10-ին
ԼՂՀ ԱԿԱՀՄ-ը նշեց իր գոր-
ծունեության հերթական՝
արդեն 17-ամյակը:

Նրա հարյուրավոր ան-
դամներին առջետուն վերս-
տին սպասում է անվերջա-
նալի թվացող սրտամաշ
սպասումը՝ խառնված թող
որ թույլ, բայց չմարող հույսի
հետ, թե մի օր գուցե գեթ
ոմանց բախտ կվիճակվի գր-
կել գերության դաժան մա-
զիլներից ազատված, տուն
վերադարձած որդիներին...



Սպասող մայրեր, հույս ճառագող մոմեր...

...Մայրաքաղաք Ստեփանակերտի քաղաքապետարանի թիկունքում գտնվող հսկա բակը ոտք դնողի ուշադրությունն իսկույն է գրավում ջրի ցոլարձակող շիթերով փոքրիկ ցայտաղբյուրը, որի կողին փորագրված է. «Որդիս կգա...»:

Որտեղի՞ց...Ծարավը հագեցնելու փոխարեն ծորակի վրա կռացածն ուղղվում, նայում է վեր եւ ուղիղ իր դիմացը գտնվող ու ցերեկը միշտ բաց դռան վերետում տեսնում «ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան» ցուցանակը՝ որպես «որտեղի՞ց»-ի լավագույն բացատրություն:

Հուշաղբյուրի կառուցման ծախսը հոգացել է Սիսիանի պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն, Վերա Գրիգորյանի մանկության ընկեր ու համադասարանցի Ծովինար Պետրոսյանի ընտանիքը:



*«Որդիս կգա...» հուշաղբյուրը
սփոփանք է բոլորիս համար*



*Սպասում ենք, Աստուծո
գործությանը, բոլոր տղաների
վերադարձին*



«Որդիս կգա...» հուշաղբյուրի բացումը (2004թ., հոկտեմբերի 10)



«Արարք» ջոկատի ազատամարտիկների ծնողները

Հուշաթանգարանի մուտքի շենք հատելով՝ քարձրանում ես սանդուղքով, որի երկկողմյա պատերից քեզ են «նայում» վանդակաճաղի հետետում հայտնված ջահել տղաները...

Աստիճանահարթակին հասնելուց էլ հայացքիդ է զարնվում «ԱԿԱՀՄ» խորհրդանշանը:



Այս աստիճանները մեզ տանում են հուշաթանգարանի սրահները



ԱԿԱՀՄ խորհրդանշանը

Հուշաթանգարանի մուտքի միջանցքը

Ինչի՞ց սկսել. հարցի պատասխանը գտնելը չէր դժվար, դժվարը ծրագրածն իրագործելն էր՝ ըստ կանոնադրված ուղղությունների, իսկ դրանք բավականին խիտ էին:

Գրիգորյանի համար աշխատանքն սկսվեց մարտերում անհայտ կորած զավակներ ունեցողներին, ինչպես նաև խաղաղ բնակչության թվից անհայտ կորածների հարազատներին գտնելու (հանրապետության մասշտաբով) եւ նրանց կազմակերպության շուրջ համախմբելու, յուրաքանչյուրին հուզող հարցերին լուծում փնտրելու եւ գտնելու առաքելությունից: Իսկ դա մեկ օրվա, մեկ ամսվա գործ չէր, այլ տեւեց տարուց էլ ավելի, որովհետեւ պատերազմն ու բռնագաղթը շատերին ցրել էին անհայտ ուղղություններով:

Անհայտ կորածների վերաբերյալ փաստաթղթերի (անձնական գործ ստեղծելու համար), ինչպես նաև նրանց ընտանիքներից յուրաքանչյուրի սոցիալական վիճակի մասին տվյալների բազայի ստեղծման նպատակով հարկ եղավ ոչ մեկ անգամ մեկնել հեռավոր շրջանները՝ մարդկանց հետ անձամբ զրուցելու համար:

Գործընթացը հնարավորինս արագացնելու, դյուրացնելու համար յուրաքանչյուր շրջանում կազմակերպության մասնաճյուղ բացվեց՝ գործի համար պատասխանատու անձով:

Նպատակասլաց ու մանրակրկիտ աշխատանքը տվեց իր պտուղները. վաղուց արդեն առկա է տվյալների այնպիսի հարուստ բազա, որից, երբ զգացվեց դրա անհրաժեշտությունը, ԱԿԱՀՄ-ը պատճենած մաս տրամադրեց ԿԽՄԿ-ի Ստեփանակերտի գրասենյակին՝ վերջինիս որոնողական եւ մյուս աշխատանքներին նպաստած լինելու համար:



Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների հետ զրուցելուց հետո թանգարանի հուշանատյանում գրառում է անում ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասարչիկը (2005թ., մայիսի 5):



Հուշաթանգարանի մեծ սրահում ուշադիր դիտողը ճախակողմյա ընդարձակ ու մեծ պատին ամրացված՝ անհայտ կորած ազատամարտիկների նկարների դասավորվածության մեջ տեսնում է հատակին չոքած աղոթող մոր, իսկ ճակատային պատին՝ ամուսնուն երեխաների հետ սպասող կնոջ կերպարանքներ: Դրանք կազմակերպության ղեկավար ու թանգարանի տնօրեն Վ. Գրիգորյանի հարուստ երեսակայության պտուղն են:

Տառապանքը ազգություն ու սահման չի ճանաչում. այս ճշմարտության մասին է հիշեցնում սրահում առկա վահանակը: Ցանկացած պատերազմ, իրոք, ցավ է բերում ոչ միայն ազրեսիայի ենթարկվող, այլև նախահարձակ կողմերին ...



Ազգությունից անկախ՝ մայրը մնում է մայր, զավակը՝ զավակ, որի կորուստը հանգիստ տանել չի կարող ոչ-ոք:

Վ. Գրիգորյանն անշամբ է արեղծել անհայտ կորած ազատամարտիկների ցուցակների, քարտերի եւ անձնական գործերը



Գլխավոր սրահի կենտրոնում տեղադրված ցուցափեղկերում անհայտ կորած ազատամարտիկների անձնական իրերն են. հագուստներ, փաստաթղթեր, ինքնաշեն զենքեր, պատվոգրեր, մեդալներ, նամակներ, օրագրեր...

Էրիկ Պողոսյանը ներքին գործերի համակարգի սպա էր, ծառայում էր Հաղորթում: Անհայտ կորել է 1991 թվականին, Քարազլուխ գյուղի մոտ, ծառայողական պարտականությունները կատարելիս, տխրահռչակ գեներալ Սաֆոնովի ռեժիմի ժամանակ... Սպայի մայրը թանգարանին է հանձնել որդու լուսանկարների արբոմը, դիպլոմը, պատվոգիրը եւ այլ իրեր:



Սլավիկ Միրզոյանն Ասկերանի շրջանի Սառնաղբյուր (Աղբուլաղ) գյուղի կոլտնտեսության նախագահն էր, իսկ Արցախյան շարժման ռազմական փուլում նաեւ գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարը:

Անհայտ կորել է գյուղի վրա գրոհող թուրքական տանկերի դեմ մղված մարտի ժամանակ:

Ցուցափեղկում տեղ են գտել նրա նամակները, հայրենասիրական ու սիրային մոտիվներով հուզիչ քանաստեղծությունները եւ այլ հետաքրքիր մասունքներ:

Նարեկ Գանիելյանն ուսանում էր Արցախի պետական համալսարանում: Կամավորական ջոկատի զինվորագրված տղան մասնակցել է մի շարք մարտերի, նոնականետաձիգ էր, իսկ այդպիսիք, դա ամենից լավ գիտեն զինվորականները, սովորաբար մարտի ժամանակ գտնվում են հակառակորդի սետեռուն ուշադրության կենտրոնում...

Անհայտ կորել է Մաղավուզի ազատագրման ծանր մարտում: Գերազանց ուսանողի, հայրենասեր պատանու լուսանկարը հուզմունքի ալիք է բարձրացրել թանգարանի հազարավոր այցելուների սրտերում:





Սպարտակ Գրիգորյանը ծառայել է ԼՂՀ ներքին գործերի նախարարության համակարգում՝ իրեն դրսեւորելով որպես հայրենիքի պաշտպանության ակտիվ մասնակից: Սրբությամբ է կատարել հանձնարարված յուրաքանչյուր առաջադրանք՝ բարեխիղճ ու անձնվեր ծառայությամբ օրինակ ծառայելով մյուսներին: Մասնակցել է Ջամիլուի, Քյոսալարի, Ջանհասանի, Շուշիի, Մալիբեկլուի, Պուշկեն-յալի ռազմագործողություններին:

1993 թ. Պուշկեն-յալի ազատագրման մարտական գործողությունների ընթացքում վիրավորվել է, բուժվել Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում, բուժումը դեռ լիովին չավարտած՝ նորից մեկնել ռազմի դաշտ...

1994 թ. հունվարի 6-ից մինչև 16-ը Սպարտակ Գրիգորյանը մարտնչել է Ֆիզուլու շրջանի Կարախանբեյլի-Կորգան գյուղերի

մարտական գծում: Միլիցիայի ջոկատը, որի կազմում էր Սպարտակը, հունվարի 16-ի լույս գիշերն ընկավ շրջապատման մեջ: Թշնամու օղակը ճեղքելուց հետո պարզվեց, որ չկան նա եւ համաջոկատային Գառնիկ Ավթանդիլյանը:

Նրանց ճակատագիրն առ այսօր անհայտ է:

Արկադի Հովնանյանի (հայ տաղանդավոր երգիչ Անդրեի հորեղբայրն է) դիմաստիկական պարագաներն ու դերձակի՝ նրա սանտիմենտը թանգարան է բերել մայրը՝ ուսուցչուհի Մեղա Առաքելյանը:

Ա. Հովնանյանը մասնակցել է Ադրամի եւ Մարտակերտի ուղղությամբ ընթացած մարտերին, անհայտ կորել է 1993թ. Փափրավենդի մատույցներում ծավալված մարտում:




Անհայտ կորած ազատամարտիկների անձնական իրերից

Յուցադրված է նաև
Վլադիմիր Մինասյանի զին-
վորական համազգեստը:
Նա կռվում էր հետախու-
զական վաշտում: Անհայտ
կորավ 1992թ. Մաղավուզի
ազատագրման մարտում:

Այցելուների ուշադրու-
թյանն է արժանանում սո-
սեցի (ԼՂՀ Մարտունու շր-
ջան) Ժորա Գաբրիելյանի
կիթառը:

Ժորանանհայտ կորել է
մարտական պահակակե-
տում՝ 1991 թվականին:





Առանձնանում են Բաքվից բռնագաղթած Սերգեյ Ղուլյանի՝ ռազմական ծովայինի գլխարկն ու բլուզը (մինչ պատերազմը ծառայել էր Խորհրդային բանակում): Արցախում մասնակցել է մի շարք մարտերի, անհայտ կորավ 1992 թվականին՝ Ալաշանի մոտ ծավալված դաժան մարտում (թշնամին ձգտում էր ամեն գնով հասնել տիրանալ Սարսանգի ջրամբարին ու ՀԷԿ-ին):



Փաստորեն ցեղասպանության հանցակազմ պարունակող Մարաղայի կոտորածի ժամանակ (1992թ. ապրիլի 10) անհայտ կորած Ալվինա Բաղդասարյանից մնացած փաստաթղթերը:


Յուցադրված է բաք-վեցի Դավիթ Առաքելյանի ակորդեոնը: Պատանին մասնակցել է Ադրամի, Մարտակերտի շրջանների պաշտպանական եւ ազատագրական մարտերին:

Անհայտ կորել է 1994թ. մայիսի 5-ին, Փափրավենդի ազատագրման մարտում, երբ հրադադարի կնքմանը մնացել էր ոչ լրիվ տասը օր...



Թանգարանի մեծ սրահում

Անհայտ կորած ազատամարտիկների թեմայով ԱԿԱՀՄ նախագահ Վ.Գրիգորյանը գրել է 23 գիրք. 18-ը՝ արձակ, 5-ը՝ չափածո, պատրաստել ու հրատարակել է եռալեզու երկու օրացույց, կազմակերպության տասնամյա եւ տասնհինգամյա հոբելյաններին նվիրված գրքույկներ, լույս ընծայել «Հուլիսի ճանապարհ» վերտառությամբ թերթ:



Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը դարձել է հայրենյաց դասերի անցկացման յուրօրինակ օջախ:



Համարյա ամեն օր կամ շաբաթ այցելում են զինվորական խմբեր ու աշակերտական կոլեկտիվներ: Հայրենասիրության դասերը, որպես կանոն, անցկացվում են զլխավոր սրահում՝ երբեմն փոքրիկ դասախոսությունների, իսկ ավելի շատ՝ անկեղծ ու մտերմական զրույցի կամ էլ ուղղակի հարց ու պատասխանի ձևով: Հատկապես աշակերտները շատ են հետաքրքրվում ցուցանմուշներով:



Քերոլայն Քոքսը գրառում է կատարում հուշամատյանում



*ԱՀ ՊՆ, ՊԲՀ, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանի
հերթական այցը*



Արիության դաս զինվորների հետ



Չորացրված զինվորի հարգանքի փոփոխություն



Մեզ հույս են ներշնչում նաև զինվորները



Շարադրությունների մրցույթի մասնակիցը խրախուսվում է



ՀՀ-ից մշտապես ժամանող մեր հայրենակիցները



Եռարտնի առթիվ նվերներ անհայր կորած ազատամարտիկների հարազատներին (2010թ. մայիսի 9)

Այդ խմբերը տարբեր ժամանակներում թանգարանին են հանձնել հետաքրքիր շատ հուշանվերներ:



Այսրեղ հաճախ են աղոթում այցելուները



Այս խաչքարը նվիրել են Արցախյան պատերազմի երկու մասնակիցներ:

Անհայտ կորած ազատամարտիկների հարազատներից շատերն են ամեն ուրբաթ գալիս այստեղ՝ մոմեր վառելու հեռվի անորոշության մեջ գտնվող իրենց զավակների համբերության համար: Աստծուց խնդրելով կրկնապատկել նրանց հոգեկան կորուվը, որպեսզի կարողանան դիմակայել ֆիզիկական ու բարոյական կտտանքներին:



Այս հրացաններից մեկը 2000 թվականին նվիրել է երկու պատերազմների (Հայրենական մեծ եւ Արցախյան) մասնակից Ռուբեն Ավագյանը:

Իսկ մյուսը՝ 2006 թվականին Արցախյան պատերազմի մասնակից, լեգենդար 26-րդ պահակակետի հրամանատարներից մեկը՝ Դավիթ Առուշանյանը (սկզբնական շրջանում նույն պահակակետում եղել է եւ ԱԿԱՀՄ նախագահի միակ որդին՝ Սպարտակ Գրիգորյանը):

Երրորդը թանգարան է բերել Արցախյան պատերազմի մասնակից Սլավա Դավթյանը:

Իսկ չորրորդը՝ նույն պատերազմի մասնակից. մանկալաշենցի Ռաշիդ Մանասյանը:

Դրանք բոլորն էլ խորհրդանշում են Արցախյան գոյամարտի այն օրերը, երբ անզեն հայերը չհայտարարված պատերազմ սկսած եւ այդ նպատակով նախօրոք մինչեւ ատամները զինված Ադրբեջանի դեմ ստիպված էին կռվել ինքնաշեն ու պարզունակ կամ, լավագույն դեպքում, որսորդական հրացաններով:



Պատմաբան ու չորս գրքի հեղինակ Ռոբերտ Բաբայանը նվիրել է հայտնի մարզիկ, արցախյան ֆուտբոլի երբեմնի լեգենդար խաղացող, մի ժամանակամիջոցում՝ նաեւ թիմի ավագ, պատերազմի դաշտում իսկական հերոսություն դրսևտրած եւ դաժան մարտերից մեկում անհայտ կորած Վարուժան Բաբայանի՝ ժամանակին ֆուտբոլային հայտնի մրցամարտում շահած մրցանակային սափորը:



Այս երկու սրբապատկերը թանգարանին է նվիրել Միքայել Գրիգորյանը:

Եկեղեցիների այս մանրակերտերը թանգարանին նվիրել են Պաշտպանության բանակի № № 38636 և 46994 զորամասերի սպաներն ու զինվորները և Արցախի պետական համալսարանի դասախոս Միլվա Խաչատրյանը:



Սա այն վայրն է եւ այն մարտական դասավորվածությունը, որտեղ իր վերջին մարտն է մղել «Արաբո» լեզենդար կամավորական ջոկատը: Այն թանգարանին նվիրել է այդ ջոկատի անդամ եւ անհայտ կորած եղբայրներ Արմեն ու Կամո Կարապետյանների հորաքույր Նազիկ Կարապետյանը:



Այս պատկերանկար գորգը (գորբելենը) թանգարանին նվիրել է սիրիահայ Հովիկ Պետրոսյանը:



Ժամանակին հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված՝ Անհայտ կորած ազատամարտիկների հուշարձանի գիպսե մանրակերտը (հեղինակ՝ քանդակագործ Յուրի Հովհաննիսյան), որին, սակայն, բախտ չէր վիճակված քարակերտվելու կամ մետաղակերտվելու: Դրա փոխարեն Ստեփանակերտի հուշահամալիրում կանգնեցվեց խաչքար, ավելի ուշ էլ՝ միանգամայն այլ լուծումով հուշարձան:





Հուշաթանգարանի ընդունելության փոքր սրահ մտնելուց առաջինը նկատում ես ճակատային պատին՝ ԼՂՀ պետական դրոշի ֆոնին թեևերը լայն տարածած արծվին՝ մեր երկրի գինանշանի վրա առկա ատրիբուտներից մեկին, որն իր լայն կրծքին կրում է ոչ միայն հուշաթանգարանում, այլև նրանից դուրս տարբեր տեղերում անցկացված՝ անհայտ կորած ազատամարտիկների հիմնախնդրի ու հիշատակի հետ առնչված միջոցառումների (հանդիսավոր ժողովներ, տոնական օրերի կոլեկտիվ նշումներ, գրքերի ու ֆիլմերի շնորհանդեսներ և այլն) մասին հավաստող լուսանկարներ:



Ռազմահայրենասիրական առանձնասենյակի մի անկյունը

Ընդունելության մեծ սրահի մուտքից աջակողմյա պատի դարակներում առկա են անհայտ կորած ազատամարտիկների մասին պատմող 12 տեսաֆիլմեր, որոնք հեղինակել է կազմակերպությունը եւ անձամբ նրա նախագահ Վ.Գրիգորյանը, ինչպես նաեւ (ընդամենը 229) դեռեւս «հում» տեսանյութեր:

ԱԿԱՀՄ հուշաթանգարանի գրադարանը կրում է Արցախյան ազատամարտի հերոսներից մե-



Կարոտի դիմանկարով շորը

կի՝ ՀՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի եւ ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանների ասպետ, կամավորական ջոկատի հրամանատար Կարոտ Մկրտչյանի անունը, որն անհայտ կորել է Շահումյանի շրջանի պաշտպանության ճակատագրական մարտերից մեկում: Այն պարունակում է ավելի քան վեց հազար կտոր գրականություն. Արցախյան ազատամարտին նվիրված պատմավավերագրական գրքեր, գրքույկներ, տեղեկատու, գեղարվեստական գրականություն եւ այլն: Գրադարանը լիովին ստեղծվել է նվիրատվություններից:

Անհայտ կորած ազատամարտիկների հիվանդ հարազատների առողջության վերականգնմանն աջակցելու նպատակով 2007 թվականի ապրիլին ԱԿԱՀՄ-ում բացվել է բուժկետ:



Առողջապահության նախարար Չոյա Լազարյանը եւ Վերա Գրիգորյանը բուժկետի բացման արարողության ժամանակ



Բուժկետի սենյակը



Առողջապահության նախարար Կարինե Աբայանը բժշկական պարագաներ է հանձնում անհայր կորած ազապամարտիկների հարազատներին



Թանգարանի ռազմահայրենասիրական սենյակի ցուցադրախարակը



Ուազմահայրենասիրական սենյակի անկյուններից



Ռազմահայրենասիրական սենյակի ցուցադրախրատակներից

Միջոցառումներ կան, որոնք հատուկ այստեղ են անցկացվում:

Օրինակ՝ «Չարթոնք» մանկապատանեկան կազմակերպության «Աստղիկների» (1- 4-րդ դասարանցիներ) և «Արծվիկներ»-ի (հինգերորդ և ավելի բարձր դասարանցիներ) երգման արարողությունը:



Մտեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի կոլեկտիվը

Թանգարանի առաջին շարժական ցուցավահանակների պատկերները:





Թանգարանի մեծ սրահն ու գրադարանը միմյանցից բաժանող միջանցքը:

Այստեղ գտնվող առաջին դարակասեղանի ցուցափեղում, որպես տասնյոթ տարում կազմակերպության եւ թանգարանի հայրենասիրական գործունեության բարձր գնահատական, ներկայացված են ԼՂՀ կառավարության եւ ՀՀ պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության եւ Արցախի մի շարք պետական ու հասարակական կազմակերպությունների կողմից տված մեդալները:



Կոմանդոսի՝ Արկադի Տեր-Թադևոսյանի ձեռքից «Քաջարի մայր» մեղալ ստանալը պատիվ է ցանկացած հայ կնոջ համար:



Ցավի եւ հույսի դրդանջներ



*Դարակասեղան՝
անհայր կորածների
նվիրված գրքույկներով*

ԱԿԱՀՄ գրասենյակի պատերից մեկը՝ Միությանը տրված պատվոգրերի հարուստ հավաքածուով:



Այս ցուցափեղկը «պատմում» է Նապոլեոն (Արկադի) Հայրիյանի մասին, որը ծանրակշիռ ներդրում է ունեցել Արցախյան գոյամարտում:

Խորհրդային օմոնի օգնությամբ ադրբեջանական զինված խմբավորմանը հաջողվեց ձերբակալել նրան:





Նապոլեոնն իր վերջին առաջադրանքը կատարելուց առաջ

Բաքվի բանտերում տեսական կտտանքներ կրելու հետեւանքով Ն.Հայրիյանը վախճանվեց:

Հայկական կողմին մի կերպ հաջողվեց ԿԽՄԿ եւ ԼՂՀ ռազմագերիների, պատանդների ու քաղաքացիական անձանց հարցերով հանրապետական հանձնաժողովի միջամտությամբ եւ օգնությամբ հակառակորդից ստանալ նրա դիակը, տեղափոխել Երեւան, այնտեղից էլ Արցախ եւ հողին հանձնել հայրենի գյուղում: Աճյունն անմիջաբար ստացել ու բերել են ՀՀ ՊՆ Գլխավոր շտաբի սպա, գնդապետ Ճորգունցյանն ու ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Գրիգորյանը:

Հետագայում Ադրբեջանը որդեգրեց ավելի դաժան եւ անարդկային քաղաքականություն՝ ետ չտալով անգամ գերիների աճյունները եւ ընդհանրապես ժխտելով նրանց գոյությունը իրենց բանտերում...

Դժվարին էր հաղթանակի ճանապարհը: Արցախյան ազատամարտի հաղթանակն, իրոք, եկավ թանկ գնով: Հարյուրավոր քաջ հայորդիներ զոհվեցին կամ անհայտ կորան ռազմադաշտերում, բայց ոչինչ չկարողացավ կասեցնել մեր բանակի, հայրենյաց մվիրյալների թափը, որն, ի վերջո, հակառակորդին ստիպեց հրադադար ադերսել...

Մարտադադար է եւ «խոսում» են կիթառի լարերը...



*Աջից առաջինը անհայտ կորած ազատամարտիկ
Ֆելիքս Գրիգորյանն է*

«Հակառակորդը պապանձվել է, տղերք, մի-մի գլանակ ծխենք...»:



*Չափից երկրորդը անհայտ կորած ազատամարտիկ
Ժորա Օհանյանն է*

Ոչ-ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել... 11 տարի է արդեն՝ ինչ ԱԿԱՀՄ նախաձեռնությամբ անցկացվում է անհայտ կորած ազատամարտիկների եւ ավելի լայն վերցված՝ հայրենասիրության թեմաներով օրինակելի շարադրությունների մրցույթ, որին մասնակցում են ավագ դպրոցի աշակերտներն ու Պաշտպանության բանակի զինվորները: Լավագույն ճանաչված աշխատանքների հեղինակները, բնականաբար, արժանանում են մրցանակների:

Բոլոր տոն օրերին մարդաշատ է լինում ԼՂՀ մայրաքաղաքի Հուշահամալիրը, որի մի թեւն էլ զբաղեցնում է Անհայտ կորած ազատամարտիկների հուշարձանի «ենթահամալիրը»:

Հուշարձանն այս, որը, պայմանականորեն ասած, ԱԿԱ հուշաթանգարանի բացօդյա ցուցանմուշ կարելի է անվանել, միայն տղաների հիշատակը չէ, որ խորհրդանշում է, այլև՝ նրանց հարազատների, ապա եւ, ինչու չէ, իրենց իսկ Սպասու-մը... Սպասումը այն օրվան, երբ մեկին, ի վերջո, կհաջողվի անհայտությունից տուն վերադառնալ, իսկ մյուսին՝ գրկել իրենց տառապյալներին ...

Եղիցի՛ այդպես:



ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ













**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
ՀՈՒՇԱԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Կենդանուհի տարածք	քառ.մ	1488 Կմ	Շահագործում
Սենյալների թիվը	հատ	8	
Այլատնակների թիվը	ժայռ	6	
Տարածուչների բնակարար թվում	հատ	4127	
Լուսավորիչներ որից՝		2624	
ա/անհատ կողմ ազատանկալիչների	հատ	250	
բ/առանկալիչ և խառը բնակիչների	հատ	2274	
ձայն			
Ինքնուշուր սարքավորումները	հատ	28	
անձնական իրեր	հատ	808	
զորքեր	հատ	6450	
վառարարքերու զորքեր	հատ	1900	
Հրատարակում զորքեր, ծախսան	հատ	23	Ի համապատասխան Իրենադրման արտիկ 06.29.2004թ. 2010թ.առկայությունը
Հանձնարարությունների ընդհանուր թիվը	ձայր	1134000	
Խաճախամուկի թիվը, տարբեր	ձայր	17180	
ընթացում			
արդ. թվում			
ԼՂՀ ՊԲ գլխավորներ	ձայր	5900	
աջակցություն և խառնուրդներ	ձայր	4500	
Ել. երկրի բաղադրագրիներ	ձայր	2000	
ՀՀ բաղադրիչներ	ձայր	1600	
ՈՒԷ արտադրություն	ձայր	2210	
ԱՄՆ արտադրություն	ձայր	590	
Հանձնարարությունների թիվը անվա ընթացում	ձայր	1200	Կիրառված է ճիշտ թիվը
Հանձնարարությունների թիվը օրվա ընթացում	ձայր	100	Կիրառված է ճիշտ թիվը
Հանձնարարությունների աշխարհագրական	Էլեկտր	50	
Հեղանակում անվա դրոշմների	հատ	5995	
թվումը			
Օնլայն նկարագիրը			2-րդ նախընտր

ԼՂՀ ԱԿԱՆ
ՆԱԽԱԲԱԿ



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ICRC

Stepanakert, 5 August 2019
81E12/00127

Dear Ms Grigoryan,

The Mission of the International Committee of the Red Cross (ICRC) in Nagorno-Karabakh is pleased to invite you to the inauguration ceremony of the meeting room for the families of those who went missing as a result of the Nagorno-Karabakh conflict.

The ceremony will take place on 8 August 2019 at 12 noon in Martakert town, at building of the Martakert Central Library.

The ICRC kindly requests you to confirm your participation before/for on Thursday, 8 August 2019 by calling the ICRC at (047) 94 37 40 or 94 63 71.

Yours truly,

A handwritten signature in blue ink, appearing to read 'P. Ducruet'.

Pierre-Emmanuel Ducruet
Head of Mission

Ms Vera Grigoryan
Head of the Union of the Relatives of Missing Warriors
Stepanakert
Nagorno-Karabakh

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստեփանակերտ, 5-ը օգոստոսի, 2019թ.
STE19/00127

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) Առաքելությունը Լեռնային Ղարաբաղում պատիվ ունի Ձեզ հրավիրելու ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքների համար ստեղծված հանդիպումների սենյակի բացման արարողությանն, որը տեղի կունենա սույն թվականի օգոստոսի 9 -ին ժամը 12:00-ին, Մարտակերտ քաղաքի կենտրոնական գրադարանի շենքում:

Խնդրում ենք հաստատել Ձեր մասնակցությունը մինչև ս. թ օգոստոսի 8-ը ներառյալ՝ զանգահարելով ԿԽՄԿ ղարաբաղյան առաքելություն (047) 94 37 40 կամ 94 63 71 հեռախոսահամարներով:

Հարգանքով՝

Պիեռ-Էմանուել Դյուբրուե
Առաքելության ղեկավար

Տիկին Վերա Գրիգորյանին
Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահին
Ստեփանակերտ
Լեռնային Ղարաբաղ



ICRC

Stepanakert, 12 August 2019
STE1900134

Dear Ms Grigoryan,

The Mission of the International Committee of the Red Cross (ICRC) in Nagorno-Karabakh is pleased to invite you to the inauguration ceremony of the meeting room for the families of those who went missing as a result of the Nagorno-Karabakh conflict.

The ceremony will take place on 15 August 2019 at 14:00 in Hadrut town, at the Cultural and Youth Center.

The ICRC kindly requests you to confirm your participation before/on Wednesday, 14 August 2019 by calling the ICRC at (047) 94 37 40 or 94 63 71.

Yours truly,

A handwritten signature in blue ink, appearing to read 'P. Ducruet'.

Pierre-Emmanuel Ducruet
Head of Mission

Ms Vera Grigoryan
Head of the Union of the Relatives of Missing Warriors
Stepanakert
Nagorno-Karabakh

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստեփանակերտ, 12-ը օգոստոսի, 2019թ.
STE1900134

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) Առաքելությունը Լեռնային Ղարաբաղում պատիվ ունի Ձեզ հրավիրելու ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքների համար ստեղծված հանդիպումների սենյակի բացման արարողությանն, որը տեղի կունենա սույն թվականի օգոստոսի 15-ին ժամը 14:00-ին, Հաղրուփ քաղաքի Մշակույթի և երիտասարդության կենտրոնում:

Խնդրում ենք հաստատել Ձեր մասնակցությունը մինչև ս. թ. օգոստոսի 14-ը ներառյալ՝ զանգահարելով ԿԽՄԿ ղարաբաղյան առաքելություն (047) 94 37 40 կամ 94 63 71 հեռախոսահամարներով:

Հարգանքով՝

Պիեռ-Էմանուել Դյուքրուե
Առաքելության ղեկավար

Տիկին Վերա Գրիգորյանին
Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահին
Ստեփանակերտ
Լեռնային Ղարաբաղ



Stepanakert, 22 August 2019
S1E1900142

Dear Ms Grigoryan,

The Mission of the International Committee of the Red Cross (ICRC) in Nagorno-Karabakh is pleased to invite you to the event dedicated to the International Day of the Disappeared and the closure of the "Accompanying of families of missing persons" programme, which will take place on 30 August 2019 at 12 noon in the conference hall of Vallex Garden Hotel, located at 25/2, Nalson Stepanyan street, Stepanakert.

The ICRC kindly requests you to confirm your participation before/on Wednesday, 28 August 2019 by calling the ICRC at (047) 94 37 40 or 94 63 71.

Please accept, Madam, the assurances of our highest consideration.

A handwritten signature in blue ink, appearing to read "Piama-Emmanuel Ducruet".

Piama-Emmanuel Ducruet
Head of Mission

Ms Vera Grigoryan
Head of the Union of the Relatives of Missing Warriors
Stepanakert
Nagorno-Karabakh

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստեփանակերտ, 22-ը օգոստոսի, 2019թ.
STE19/00142

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) Առաքելությունը Լեռնային Ղարաբաղում պատիվ ունի հրավիրելու Ձեզ Անհայտ կորածների միջազգային օրվան նվիրված միջոցառմանը և "Սատարում անհայտ կորածների ընտանիքներին" ծրագրի փակմանը, որը տեղի կունենա 2019-ի օգոստոսի 30-ին, ժամը 12:00-ին, «Վալլերս Գարդեն» հյուրանոցի նիստերի դահլիճում՝ Ստեփանակերտ, Նելսոն Ստեփանյան 25/2 հասցեով:

Խնդրում ենք հաստատել Ձեր մասնակցությունը մինչև ս. թ օգոստոսի 28-ը ներառյալ՝ զանգահարելով ԿԽՄԿ դարաբաղյան առաքելություն (047) 94 37 40 կամ 94 63 71 հեռախոսահամարներով:

Հարգանքով՝

Պիեռ-Էմանուել Դյուքրոսե
Առաքելության ղեկավար

Տիկին Վերա Գրիգորյանին
Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահին
Ստեփանակերտ
Լեռնային Ղարաբաղ



Certificate of Appreciation

is awarded to

Vera Grigoryan

Head of the Union of Relatives of Missing Warriors

*In recognition of your long-standing partnership and previous contribution to the ICRC
"Accompanying Families of Missing Persons" programme from 2011-2019.*

Many thanks for your support!

5 April 2019

Date



ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ՁԻՆՎՈՐԻ ՄՈՐ ԱՂՈԹՔԸ

Տեր իմ Աստված, Բարձրյալ պաշտելի, ականջալուր եղիր սրտակոտոր մոր աղերսանքիս. ուժ ու կորով տուր ինձ հասնելու բազմամյա որոնումներիս բաղձալի նպատակին, գտնելու ու փրկելու աղբբեջանական գերության անողոք ճիրաններում տառապող միևուճար որդուս՝ Սպարտակին ու նրա բախտակից ընկերներին: Դու՝ Ամենաարդարը, Ամենատեսն ու Ամենակարողը, ցույց տուր ինձ ճամփան, որ տանում է դեպի նրանց տանջարան, գորավիզ եղիր գորովագութ՝ քանդելու մեր զավակների շղթաները, սպեղանի դնելու նրանց բաց ու անամոք վերքերին, հայրենի տուն դարձի բերելու անհայտության խորխորատներից:

Տեր իմ Աստված, աղաչում, պաղատում եմ ծնկաչոք՝ որդյանց կարոտից մարող մեր սրտերին շնորհիր հույսի գեթ մի շող, երջանկության վերջին մի պահ՝ մայրաբար մեր կրծքին սեղմելու հանուն Հող Հայրենիի ահեղ մարտերում անհայտ կորած մեր տառապյալ զավակներին:

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Արցախի Հանրապետության Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը խորին շնորհակալություն է հայտնում սույն գիրք-ալբոմի լույս ընծայման բոլոր ծախսերն ստանձնած ՄԱՐԱՏ ՎԱԼԵՐԻԻ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ:



Նա ծնվել է 1975 թվականին, Ստեփանակերտում, միջնակարգ կրթություն ստացել հայրենի քաղաքում:

Որպես ազատամարտիկ, մասնակցել է Արցախյան պատերազմին, մասնավորապես՝ Թալիշ, Չայլու եւ այլ բնակավայրերի համար մղված մարտերին:

Անուսնացած է, ունի երեք երեխա:

Ապրում եւ աշխատում է ՌԴ Անապա քաղաքում:

Մարտը սիրում է հնարավորության սահմաններում բարի գործեր ձեռնարկել, մանավանդ՝ երբ խոսքը վերաբերում է Արցախին...

Մասնավորապես՝ նոր էլեկտրացանց է ապահովել Լուսաձոր գյուղի համար, ինչ-



*Չախից առաջինը
Մարտը Մարգարյանն է*

պես նաեւ միջոցներ տրամադրել ճանապարհի հիմնականուցման համար:

Ո՛չ մեկ անգամ՝ նա կոնկրետ աջակցությամբ նպաստել է եւ Պաշտպանության բանակի զինվորների կենսապայմանների բարձրացման գործին: Իմ այն հարցին, թե ի՞նչն է մղում իրեն



Աջից երրորդը Մարատ Մարգարյանն է

նման քայլերի, զարմացավ. «Իսկ մի՞թե հասկանալի չէ...հայրենիքի նկատմամբ կարոտը եւ, թեկուզեւ հեռվից՝ նրան կարողացածիս չափ օգտակար լինելու ցանկությունս...»:

Եվս մեկ անգամ շնորհակալություն քեզ, Մարատ ջան, քո սրտալից վերաբերմունքի համար:

ВЕРА ГРИГОРЯН
ПУТЕВОДИТЕЛЬ
МУЗЕЯ ПАМЯТИ БЕЗ ВЕСТИ ПРОПАВШИХ
ВОИНОВ-ОСВОБОДИТЕЛЕЙ НКР
(1991-1994)
(РЕЗЮМЕ)

В ответ на Арцахское национально-освободительное движение 1988 года (требования которого вполне вписывались в Главный закон СССР) Азербайджан применил репрессии, а затем развязал войну. В навязанной им войне Армия обороны Арцаха и арцахский народ победили, заставив врага заключить перемирие.

Победа нам досталась дорогой ценой. Много славных сынов армянского народа погибло на фронте. Имена некоторых из них появились в списках без вести пропавших лиц, и сама жизнь внесла в лексику арцахцев новый термин - СРБВПВ (Союз родственников без вести пропавших воинов).

Любая война приводит к появлению военнопленных, и азербайджано-карабахская война не стала исключением. Общее число пропавших без вести на этой войне с арцахской стороны составило 730 человек, 239 из которых - военнослужащие. Во всем мире действуют определенные международные законы и соглашения, согласно которым после завершения войны стороны в качестве акта доброй воли обмениваются военнопленными. Между тем, следуя своей политике отрицания, Азербайджан де-факто поставил себя вне этих законов.

Мучительное ожидание семей без вести пропавших и поиски последних, за исключением отдельных случаев, в начальный период ощутимых результатов не давали: 4 года спустя после заключения перемирия, в 1998 году, они приняли решение создать свою общественную организацию с целью объединить и координировать усилия членов Союза, оказать им моральную и материальную помощь. О создании СРБВПВ было объявлено на учредительном съезде, председателем организации была избрана

мать без вести пропавшего воина Вера Григорян, которая «кораблем» организации продолжает умело управлять до сегодняшнего дня.

По предложению СРБВПВ и с согласия властей НКР в 1999 году был учрежден День памяти без вести пропавшего воина, что в очередной раз доказывает, что война продолжается, пока не вернулся домой последний воин... По объяснимым причинам, в качестве Дня памяти выбор пал на 29 июня: во время войны в этот день этого месяца армянская сторона понесла тяжелые потери, когда доблестные воины добровольческого отряда «Арабо» оказались в засаде, многие из них были расстреляны и растерзаны варварами, судьба же плененных до сих пор неизвестна...

СРБВПВ разработал и реализовал ряд программ по многим направлениям.

Одним из таких направлений является поиск без вести пропавших воинов; здесь организация тесно сотрудничала и продолжает сотрудничать с Республиканской комиссией по делам без вести пропавших и военнопленных, а также Степанакертским офисом Международного комитета Красного Креста.

Спустя четыре года после создания СРБВПВ, на очередном заседании организации было принято решение установить памятник и открыть музей как олицетворение Ожидания родных и Памяти пропавших. Оба проекта были претворены в жизнь в 2004 году. Торжественное открытие состоялось, конечно же, 29 июня...

Пожалуй, стоит отметить, что осуществление упомянутых программ требовало значительных материальных ресурсов, чего можно было достичь путем привлечения благотворительных инвестиций. Достижению этой цели руководство СРБВПВ посвятило несколько лет напряженного труда.

